

«ԵՏ ՔԱՇԵԼ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

«Կանայք Հայոց Աշխարհի» կազմակերպությունը կոչ ուղղած է Հայաստանի նախագահության համար Լ. Տեր Պետրոսեանի մերցակից թեկնածուներուն, որ չմասնակցին ընտրապայքարի եւ ձգեն որ ան առանձին ինքիւնք նախագահ ընտրէ:

Կազմակերպությունը կը քննադատէ ընտրական օրէնքը եւ անարդար կը նկատէ պայն: Մինչ կը նկատէ, որ ընտրական մեքենան 99 առ հարիւրով Հ. Հ. Շ. Ե. կան է եւ «Հանրապետութիւն» խմբակէն: Այս պայմաններուն մէջ, կ'առաջարկուի ընտրապայքարի համար ծախսուելիք գումարները տալ «ժողովուրդի բշուռ» մեծամասնութեան»:

«ԷՄԸԱԹԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԵԼ » ԿԼԱՍԻԿԱԼԵ:

ԻՍՐԱՅԷԼ ԳԻՏՄԱՄԲ ՌՄԲԱԿՈԾԱԾ Է ՔԱՆԱՆ

ԼՈՆՏՈՆ, 24 (ԴԵՕԹԸՐ).- «Էմմըսթի Իմթըրնէշնըլ» Զորեքշարթի օր յայտարարեց, որ Իսրայէլ զիտումնաւոր կերպով ռմբակոծած է ՄԱԿի մէկ կեդրոնը Լիբանանի մէջ, անցեալ Ապրիլին, երբ աւելի քան հարիւր գոհ ինկան:

Մարդկային Իրաւանց Միջազգային Շարժումին հաղորդագրութիւնը խիստ ոճով կ'ըսէ, որ «Զըզպլա» դէմ յայտարարուած «Ցասման Ողկոյցներ» գործողութեան ընթացքին տեղի ունեցած սպանութիւնները յրտակօրէն կը խախտէին պատերազմի օրէնքները:

«Էմմըսթի» ամբաստանեց նաեւ «Զըզպլա»-ն, դիտել տալով, որ ան եւս կը խախտէ պատերազմի օրէնքները, երբ սահմանէն հրթիռներ կ'արձակէ Իսրայէլի մէջ քաղաքային բնակիչներու վրայ:

Միջազգային կազմակերպութիւնը կը շեշտէ, սակայն, որ Իսրայէլ զիտումնաւոր կերպով ռմբակոծած է ՄԱԿի կեդրոնը, ուր ապաստանած էին հարիւրաւոր քաղաքայիններ: Օրին, Իսրայէլ յայտարարած էր, որ այդ կեդրոնը սխալմամբ ռմբակոծուած է:

ԸՆՏՐԱԿԱՆ ԱՆՈՒՐԿ

ՄԵՐ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻԶՆ ՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ՝ ՄԵՐ ՔՈՒԷՈՎ

Լիբանանի բոլոր համայնքներուն զաւակներուն պէս, մենք ալ՝ հայերս կը դիմագրանենք յառաջիկայ ամիսներու ընտրութիւններէն՝ բխող մարտահրաւերները:

Բոլորին պէս մենք ալ ունինք պարտականութիւններ եւ իրաւունքներ: Բոլորին պէս մենք ալ գիտենք, որ ընտրութիւնը եթէ պարտաւորութիւն է, ալդ պարտականութեան համբով իրաւունք հետապնդելը միայն մեր ձեռքով կ'ըլլայ, որովհետեւ որքան ալ որ բարի ըլլան կամեցողութիւնները, իւրաքանչիւր ընտանիքի ներկայացուցիչը նախ եւ առաջ յանձնառու է իր համայնքին, իր հաւաքականութեան:

Ահա թէ ինչ՞ ու կարեւոր է քուեարկութեան մասնակցութիւնը: Կը քուեարկես, եւ կարելի մ'եծանուն լինալ. որպէսզի ներկայացուցիչներդ խորհըրպարան հասնին. խորհրդարանին մէջ ունենան քու իւր ին՝ համապատասխան ներկայացուցիչներ, կ'ընտրես ա՛յն ներկայացուցիչները, որոնք գիտես թէ, ծանօթ ենք քու պատկանած հաւաքականութեանը մտահոգութիւններուն, կրնան հետապնդել եւ կարելիին սահմաններուն մէջ իրականացնել պահանջներդ: Կը քուեարկես՝ հաւատալով *Հայկական Պոքրի իւրաքանուկ հանգամանքին եւ առաքելութեան*. Վստահ ըլլալով, որ այդ Պոքրին անդամները, անհատապէս՝ յարգելի ըլլալով հանդերձ, չեն գործեր եւ պիտի չգործեն ինքնագլուխ, ըստ կամս պիտի հեռանան Պոքրէն (ինչպէս կը պատահի այլ պոքրեներու կամ ալ՝ երկիրներու մէջ) եւ պիտի չորոշեն անձնական հաշիւները ներդաշնակել հաշիւներուն եւ շահերուն հետ աշխարհի խմբաւորումներու, որոնք գլինք չեն հասցուցած խորհրդարան եւ որոնք չեն մտահոգուած զինք ընտրողներուն իրաւունքներով ու ակնկալութիւններով:

Հայկական աշխարհի պոքրի մը կազմութեան համար, տասնամեակներէ ի վեր ընտրական աշխատանքը կը տանին մեր կուսակցութիւնները, իսկ Հ. Յ. Դաշնակցութիւնը միշտ ալ ունեցած է առաջնորդի դեր: Այսօր ալ աշխատանքները կը տարուին նոյն մտասեւեռումով, այն համոզումով, որ Հայկական Պոքրի անդամ՝ մը չի կրնար պարզապէս հայանուն ըլլալ, այլ ան պիտի ըլլայ նաեւ Հայ համայնքի եւ ոչ թէ ալ՝ կուսակցութեանց կամ հոսանքներու մտահոգութիւնները եւ ակնկալութիւնները կրողը: Եւ եթէ այսօր արագ ակնարկ մը նետենք ընտրապայքարի բեմ մտնողներուն վրայ, հոն արդէն կ'երեւին հայութեան ակնցով ոչ ներկայացուցչական անձնաւորութիւններ եւ անհատներ, որոնք կրնան վաղը իբրեւ մրցակից ներկայանալ մեր ներկայացուցիչներուն եւ ընտրապայքարի մասնակցի մեր հաւանական ցանկակիցներուն մրցակից ցանկերէ:

Այժմէն իսկ յստակ է, բոլորիս միտքերուն մէջ պէտք է յստակ ըլլայ, որ յառաջիկայ ընտրութիւնները պիտի յատկանշուին ընտրապայքարով (որ աշխարհու բնական երեւոյթ է): Այլ համայնքներու մէջ կան բազմաթիւ ընտանիքներ եւ հոսանքներ, որոնց միջեւ մրցակցութիւնը պատմական խորք ունի, մինչդեռ հայութեան պարագային, այդ մտահոգութիւնը շեշտուած է: Չկայ նաեւ նախորդ ընտրութեանց՝ անտարբերութիւն բոլրատրոյ վիճակը, որ հետեւանք էր որոշ խմբաւորումներու յայտարարած *պոքրոր*ին: Այսօր, *պոքրոր*ի կոչելը միայն ճշիւն ազդեցութիւն պիտի ունենան եւ քուեարկութեան օրը, իւրաքանչիւր քուէ պիտի ունենայ իր

Ս. Մ.

ԱԶՏԱԿ

— ՕՐԱԹԵՐԹ —

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزتاك حيدة ممتعة سائدة وأدبية - اليوم للحولة - إيشادرويشيان**

1000 Լ.Ո. 71ԲԳ՝ ՏԱՐԻ, ԹԻԻ՝ 116 (19416) ՀԻՆԳՇԱԲԹԻ, 25 ՅՈՒՆԻՍ 199610 ԷԶ

ՌՈՍ ԴԱՍՍԱԿՈՍԻ ՄԷԶ

ՍՈՒՐԻԱ ՈՒԱՇԻՆԿԹՈՐՆԵՆ ԿԸ ՊԱՇԱՆՋԷ ՃՆՇԵԼ ԻՍՐԱՅԷԼԻ ԿՐԱՅ

Սուրիա երէկ կոչ ուղղեց Ուաշինկթոնի, որպէսզի ճնշում բանեցնէ Իսրայէլի վրայ, ընդունելու համար արարական հոգերը վերադարձնելու սկզբունքը: Կոչը արձակուեցաւ այն պահուն, երբ ամերիկացի յատուկ պատուիրակ Տենիս Ռոս կը պատրաստուէր տեսակցութիւն ունենալու նախագահ Հաֆէզ Ասատի հետ:

Սուրիացի պաշտօնատարներ յայտնեցին, որ Ռոս նախ տեսակցութիւն ունեցած է Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէհի հետ, իսկ Իսրայէլ ուղղուելէ առաջ, ան տեսակցեցաւ նախագահ Ասատի հետ:

Սուրիական մամուլը կը

գրէ, որ Ռոս կը ծրագրէ չորջանի դեկավարները համոզել, թէ Սիացեալ Նահանգները տակաւին յանձնառու են խաղաղութեան գործընթացի սկզբունքներուն, որոնք որդեգրուեցան 1991ին: Սուրիական մամուլը, սակայն, կ'աւելցնէ, որ Ուաշինկթոնէն կը պահանջուի ճնշում բանեցրնել Պենիամին Նեթանիա-հուի վրայ, որպէսզի ենթարկուի ՄԱԿի բոլոր որոշումներուն: «Սաուր» կը գրէ, որ եթէ Միջազգային Ընտանիքն ու յատկապէս Միացեալ Նահանգներ դէմ չկանգնին Նեթանիահուի անտրամաբանական կեցւածքին, խաղաղութեան գործընթացը ամբողջական ձախողութեամբ պիտի

աւարտի:

ԼԵՒԻ Կ՝ՈՒԶԷ ՏԵՍԼԱԿՑԻԼ ՇԱՐԷՆԻ ՀԵՏ

Իսրայէլի արտաքին գործոց նախարար Տէյվիտ Լեւի երէկ յայտարարեց, որ պատրաստ է որեւէ տեղ եւ որեւէ ատեն տեսակցութիւն ունենալու սուրիացի իր պաշտօնակիցին հետ՝ խաղաղութեան բանակցութիւններուն վերսկսելու համար:

Լեւի ըսաւ, որ եթէ Սուրիոյ արտաքին գործոց նախարար հետաքրքրուած է եւ խաղաղութիւնը կարելոր է իր երկրին համար, ինք պատրաստ է որեւէ պահու տեսակցութիւն ունենալու անոր հետ: Լեւի կը խօսէր Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Էրվէ Տր Շարէթի հետ տեսակցութենէ մը ետք: Տր Շարէթ Միջին Արեւելք կ'այցելէ, վերականգնելու համար խաղաղութեան ճիգերը:

Լեւիի հետ տեսակցութեան աւարտին, Տր Շարէթ դիտել տուաւ, որ ինք անձամբ մեծ աշխատանք պիտի տանի, որպէսզի բանակցութիւնները վերսկսուին:

սին Սուրիոյ եւ Իսրայէլի միջեւ:

Ը. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ 3. ՏԷՐ ՄՆԷՂՈՆԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԷԶ

ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՐՅԱԽ ԵՒ ՍՓԻՒՌ ԿԸ ԿԱԶՄԵՆ ՄԷԿ ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆ



Հայաստանի, Արցախի եւ Սփիոքի այժմու իրադրութեանց, փոխ-յարաբերութեանց եւ մասնաւոր ազգային ապահովութեան պահպանման մէջ համայն հայութեան թեւերուն միջեւ արդիւնաւոր գործակցութեան առաջարկանքները երէկ գիշեր ըստ բաւականին խորաթափանց կերպով արծար-

Des Prix Frais pour un Été Chaud

tapi@ama
Le monde du tapis

60%

•Rabais jusqu'à 60%
•Paiement échelonné sur 10 mois
•Sans intérêts, sans 1^{er} versement

Tapis: Persan-Chinois-Européens-Moquettes-Papiers peints

ԼԵՒԻ - ԱՐԱՖԱԹ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԴՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ ԿԸ ԳՏՆԷ

ԵՐՈՒՍԱՂԷՄ, 24 (ԴԵՕԹԸՐ).- Իսրայէլի խաղաղարար գլխաւոր շարժումը Զորեքշարթի օր ողջունեց բարձրաստիճան առաջին տեսակցութիւնը՝ կառավարութեան եւ Եասէր Արաֆաթի միջեւ:

«Փյւ Նաու» շարժումը յայտնեց, որ գնահատանքի նամակ մը յղած է արտաքին գործոց նախարար Տէյվիտ Լեւիի, որ Երեքշարթի օր կազայի մէջ տեսակցութիւն ունեցաւ Եասէր Արաֆաթի հետ: Լեւի եղաւ Պենիամին Նեթանիահուի կառավարութեան առաջին նախարարը, որ կը տեսակցի պաղեստինցի դեկավարին հետ:

«Փյւ Նաու» խաղաղութեան ճամբուն վրայ կարեւոր քայլ մը կը նկատէ այս տեսակցութիւնը, որ ջնջեց Լիբուտի կողմէ տասնեակ տարիներու անտեսումը պաղեստինցի ժողովուրդին, անոր ներկայացուցիչներուն եւ օրինական իրաւունքներուն: «Փյւ Նաու» կոչ կ'ուղղէ, որ Նեթանիահու եւս տեսակցութիւն ունենայ Արաֆաթի հետ՝ հրաժարելով իր մերժողական կեցուածքէն:

Արաֆաթ - Լեւի տեսակցութիւնը ողջունեցին նաեւ պաղեստինցիները: Արաֆաթի կառավարութեան անդամ Սաէպ Ուրաջաթ, որ հանդիպումը յուրջ փորձ մըն էր, վերստին հուշին մէջ դնելու խաղաղութեան գործընթացը:

Տեսակցութեան աւարտին, Լեւի դիտել տուաւ, որ որոշած են պաշտօնականացնել իրենց կապերը եւ յարմար յատակագիծերը պատրաստել, քննարկելու համար հարցերը եւ գտնուք յառաջխաղացքի մէջ դնել: Արաֆաթ, իր կարգին, յայտարարեց որ համաձայնած են կապերը եւ հաղորդակցութիւնը շարունակել բոլոր մակարդակներու վրայ:

«Ը. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ + 30»Ի ԴԱՍԱԿԱՐՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱԽԱԶ ԽԱՆԱԹԵԱՆ ՅՐԱԺԱՐԵՑԱՒ

«Վահան Յովհաննէսեան + 30»ի դատավարութեան 23 Յուլիսի նիստին, դատախազ Ա. Խայաթեան հրաժարեցաւ, որովհետեւ պաշտպան փաստաբաններ անոր դէմ բողոք արձանագրած էին:

Ընկ. Վահան Յովհաննիսեան դէմ արտայայտուեցաւ Խայաթեանի դէմ բողոքներուն ու անոր հրաժարման, նկատել տալով, որ ան պարզապէս մեղադրականը պատ-

8

Հանրի Սֆէյրի հետ



Ֆրանսուա Պասիլի եւ Ֆատի Ռուհանա Սաքրի հետ


Հ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն երէկ շարունակեց ընդունիլ յառաջիկայ երեսփոխական ընտրութեանց թեկնածուներու այցելութիւնը:

Երեկոյեան ժամը 5ին, Հ. Յ. Դ. Սարդարապատ երկու մայրէջքի ժիպէյի շրջանի մարմնի թեկնածուներ Լիբանանի Դրամատուներու Ընկերակցութեան նախագահ Ֆրանսուա Պասիլ եւ Ֆատի Ռուհանա Սաքր: Այցելուները վեր առին Լիբանանի հայութեան դերակատարութիւնը եւ քաղաքական ուղեգիծը, շեշտելով հայերու ձեռներեցութիւնն ու հայրենիքին հանդէպ ունեցած գուրգուրանքն ու նուիրումը:

Ապա, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչները ընդունեցին «Նիստ Ուսթան» թերթին եւ «Այ. Սի. Էն» պատկերասփուռի ընկերութեան տէր Հանրի Սֆէյրի այցելութիւնը: Սֆէյր թեկնածու է մարոնիներու Քեսրուանի արձոյն: Ընդհանուր քննարկում մը կատարուեցաւ ընտրական առօրեային: Սֆէյր շեշտը դրաւ Հայ համայնքի ու յատկապէս Հ. Յ. Դաշնակցութեան քաղաքական կեցունքներուն ճշգրտութեան վրայ:

Ապա, յաջորդաբար ընդունուեցան Մեքսիկ մարոնի արձոյնի ամբիոնի ժրհատ Ապու Ժաւունի ու Պէյրութի մէջ փոքրամասնութեանց արձոյն թեկնածու Եուսէֆ Ժըպրան:

ՄԵՐ ԿԱՄՔԸ ԱՐՏԱՅԱՅՏՆԵՆԸ ՄԵՐ ՔՈՒԷՈՎ



ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ ԶԱՄԱԿՆԵՐԻՆ

ԱՅՈ՛, ՀԱՅԵՐԸ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԵՆ

«Հայերը պետութեան հետ են... Հայերը միշտ ալ պետութեան ի նպաստ կը քուէարկեն... Մի հարցն էր, թէ հայերը ինչ պիտի ընեն, այլ հարցուցէք, թէ պետութիւնը ի՞նչ պիտի ընէ...»:

Այս դարասկիզբին, հայերը մեծ թիւերով եկան այս ափերը եւ յանձին Լիբանանի՝ գտան զիրենք հիւրընկալող ազնուական ու հիւրամեծար երկիր մը. որ իրենց հետ իր վերաբերումը երբեք չհիմնեց հպատակութեան կամ համայնքային պատկանելիութեան տուեալին վրայ:

Կառչեցան զիրենք գրկաբաց ընդունած այս բերրի հողին եւ հոն՝ ուր կայք հաստատեցին, այդ շրջանը վերածեցին աւելի լաւ ապագայի ի խնդիր եռացող ու տքնող փեթակի: Հաստատեցան աստ ու անդ ու պայքարեցան վեճակաւ, գալիք սերունդներուն հանդէպ ապահովելով այն նուաճումները, զորս իրենց համար չայաջողեցան իրականացնել:

Հիմնեցին արհեստանոցներ եւ գործարաններ ու դիմաւորուեցան խանդավառութեամբ ու գնահատանքով: Բացին վարժարաններ ու գրադարաններ եւ, մեծաւ մասամբ, եղան հայրենիքի բարգաւաճման եւ անոր բարձրաժեք մշակոյթի ու բարքերու պահպանման հիգիւրուն մասնակցող գործացած քաղաքացիներ: Կառուցեցին եկեղեցիներ եւ առանց ծայրայեղականութեան ու կողմնակալութեան կատարեցին իրենց եկեղեցական ծեսերը, յարգելով հայրենիքին երկնային բոլոր կրօնքներն ու անոնց ծեսերը:

Երազները սկսան իրականանալ, որովհետեւ «այն ժողովուրդը, որ չ'երազեր, ապագայ չունի», ինչպէս կ'ըսէ Մարքիմ Լուսեռ Քիմկ: Հայերը Լիբանանի հաշուոյն երազեցին «Առաքինի քաղաքը» եւ իրականացուցին գրեթէ անկարելին: Դուրս եկան թիթեղեայ հիւղաւաններէն եւ իրաւամբ եղան լիբանանեան ընտանիքի արդի տունը՝ ճարտարապետած ու կառուցած եօթը համայնքներէն մէկը:

1975ի տխրահռչակ դեպքերէն ետք, լիբանանցիները, եւ անոնց շարքին՝ նաեւ հայերը, արթնցան ողբերգութիւններու եւ աւերումներու երկար ու խոր մղձաւանջէն: Եւ այն իմաստուն որոշումը, որ Դաշնակցութեան գլխավորութեամբ հայկական աւանդական կուսակցութիւնները առին, հիմնուեցաւ արիւնահեղութեան սանձաթակ մոլուցքէն հեռու մնալու եւ անոր առաջըր առնելու սկզբունքին վրայ: Եւ միթէ հիշող չէ՝ լիբանանեան առածը, որ կ'ըսէր. «Ան որ կը համտեսէ, հայը լաւ կը ճանցնայ»: Եւ որդեգրեցին դրական չեզոքութեան քաղաքականութիւնը: Պատերազմի ամբողջ տեւողութեան ընթացքին, հայերը պահեցին իրենց դրական չեզոքութիւնը եւ Դաշնակցութիւնը եղաւ ամրապինդ կամուրջ լիբանանեան բոլոր հոսանքներուն ու համայնքներուն միջեւ, իր բոլոր կարելիութիւնները ի սպաս դնելով կողմնորոշման մերձեցման, գահավիժումին առաջըր առնելու եւ պատերազմին վերջ դնելու նախնական իրաւունքամբ: Ահա թէ ինչու կուսակցութիւնը կառչեցաւ պետականութեան գաղափարին, անոր գոյութեան եւ օրինականութեան ու այս օրինականութիւնը պաշտպանեց իր բոլոր ուժերով:

Կ'ըսենք բարձրաձայն. «Այո՛, հայերը օրինական պետութեան հետ են: Եւ ի՞նչ ամօթ կայ պետութեան հետ ըլլալուն մէջ: Այո՛, հայերը զօրավիգ են կանոնի եւ օրինական հաստատութիւններու պետութեան եւ ոչ թէ խնամիական կապերու եւ նեղմիտ նկատուումներու պետութեան: Դաշնակցութիւնը արդարութեան եւ կարգ ու կանոնի պետութեան կողքին է եւ ոչ թէ անարդարութեան ու անիշխանութեան ազարակներուն հետ: Այո՛, հայերը իս-

րապետութեան եւ ժողովրդավարութեան օրրան պետութեան կողքին են եւ ոչ թէ միլիաներու եւ բռնատուրքերու խանութներուն հետ: Այո՛, Դաշնակցութիւնը թիկունք կանգնեցաւ ու աշտուհի եղաւ քիկունք պիտի կանգնի նախագահութեան եւ գործադիր ու օրէնսդիր իշխանութեանց՝ առանց նկատի առնելու անձերը, որովհետեւ ժողովուրդներն են, որ կը կերտեն հայրենիքները եւ ոչ թէ քմահաճութեանը, իսկ օրէնքներն են, որ կ'ամրապնդեն հաստատութիւնները, եւ ոչ թէ զարտոդուրներն են»:

Ընդդիմադրութիւնը օրէնքով հաստատուած իրաւունք է: Պէտք է յարգել ընդդիմադիրը եւ անոր տեսակետները, այնքան տեսնել որ ան իր ընդդիմադիր կեցուածքը կը հիմնաւորէ իր համոզումը արտայայտող սկզբունքներու վրայ եւ կը պաշտպանէ զանոնք: Բայց պոյքոթը վտանգաւոր, շատ վտանգաւոր է, որովհետեւ անհոգութեան եւ անտարբերութեան վիճակ մըն է: Անհոգութիւն՝ նակատագիր ինչ կատամբ, եւ անտարբերութիւն՝ հայրենիքին հանդէպ: Եւ զո՛վ պոյքոթ թիկնեթարկեն, հայրենիքը, Լիբանանը, օրինական պետութիւնը, թէ անձերը, որոնց հետ տարակարծութիւններ ունին: Լիբանան արժանի չէ ոչ ոքի պոյքոթին: Այն քաղաքացին, որ պոյքոթի կը դիմէ, կը վտանգէ լիբանանեան ինքնութիւնը եւ ուրիշները կը մղէ դէպի անտարբերութիւն եւ անհոգութիւն: Վերջապէս, պոյքոթ կը ճշմանակէ՝ իսկզբաբէլ ժողովրդավար

կեանքը եւ քանդել դէպի բարգաւաճում ու յառաջդիմութիւն երկարող կամուրջները:

Այո՛, հայերը պիտի մասնակցին ընտրութեանց, որովհետեւ պետութեան հետ, որովհետեւ կը հաւատան անոր օրինական դերին, որովհետեւ կը ձգտեն աւելի լաւ եւ առաւել պայծառ վաղուան եւ կ'երազեն այն «Առաքինի քաղաքը», որուն երկնակամարին վրայ ազատութեան արեւը պիտի ծագի:

Լիբանանի ողջ տարածքին, Դաշնակցութիւնը դէպի ընտրութեան քուէատուփեր պիտի մղէ իր կուսակցական շարքերն ու համակիրները, որովհետեւ կը հաւատայ օրինականութեան եւ արդարութեան: Դաշնակցութիւնը զօրակոչի պիտի ենթարկէ իր բոլոր ուժերը եւ զանոնք պիտի առաջնորդէ դէպի անխաղախ ընտրութիւններ, որպէսզի մասնակցի արդի պետութեան կառուցման աշխատանքին: Հայերը պիտի քուէարկեն եւ Դաշնակցութիւնը, իր բոլոր կառուցներով ու մարդուժով՝ իր ամբողջական ներկայութիւնը պիտի փաստէ Մեքնի, Պէրլութի եւ Պեքաշի ընտրական քեմահարթակին վրայ:

Ամբողջական ներկայութեամբ՝ Դաշնակցութիւնը իր ներկայութիւնը պիտի հաստատէ ընտրապայքարի դաշտին վրայ՝ կարգ ու կանոնի եւ հաստատութեանց պետութեան զօրավիգ կանգնելու համար: Դիմենք մեր բանականութեան, ընդառաջենք Լիբանանի կոչին, մէկդի դնենք մեր մակերեսային զգացումները եւ անդադրաւալի մտահոգութիւնները, հեռանալով սնամէջ եւ գրգռիչ կարգախօսութեան եւ մեր ուժերը զօրակոչի ենթարկենք՝ հայրենիքին սիրոյն, յոյսերով եւ երազներով ցանուած ապագային ի ինդիր: Եկէ՛ք, միասնաբար երազենք «Առաքինի քաղաք» մը, առաքինի պետութիւն մը՝ իր Պէրլութ մայրաքաղաքով:

Քուէարկեցէ՛ք ի խնդիր Լիբանանի, որպէսզի ան մնայ միգրի:

ԱՆԻՍ ՊՕՂՈՍԵԱՆ

(«Նահար», 19 Յուլիս 1996)

ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԵՐՈՒ ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՆ ԵՒ ՀԵԿԴՅՈՄԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԺՈՂՈՎԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ 18 ՅՈՒՆԻՍ, 1996

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին տակ գործող Հայք. Եկեղեցւոյ Կիրականօրեայ Դպրոցներուն վարիչ տնօրէնութեան հրաւերով, Մայրական քիւլեհարանի ժողովարարահին մէջ գումարուեցաւ Լիբանանի եւ Բերիոյ Հայոց Թեմերու ու ՀԵԿԴՅՈՄԻ Վարչութեան միացեալ ժողովը, Հինգշաբթի, 18 Յուլիս 1996ին:

Առաջին առիթով վարիչ տնօրէն Սեպուհ Մ. վրդ. Սարգիսեան ժողով գումարեց Հայկ պի Թեմի Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդի ներկայացուցիչներուն հետ (Վարդան Փայասեան, Վարդան Համպոյեան, Ժան Աւագեան, Կարո Հայկթեան, Նազելի Ազիզեան, Սիհան Թիւթիւնճեան, Մարալ Գազանճեան եւ Լիզա Գարամանուկեան): Ժողովականները միասնաբար քննարկեցին միջթեմական համագումար-խորհրդակցական ժողովին կազուած հարցերն ու Կիրականօրեայ Դպրոցին, յատկապէս Բերիոյ Թեմի Կիրականօրեայ Դպրոցներուն կեանքին վերաբերեալ դաստիարակական-կազմակերպական հարցերն ու Կիրականօրեայ Դպրոցները աւելի աշխուժացնելու կարելիութիւնները:

Յետմիջօրէին Լիբանանի Թեմի Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդի ներկայացուցիչները (Գուրգէն քհնյ. Յովհաննէսեան, Արէլ սրկ. Արէլեան, Արարահմ Մաշճեան, Դաւիթ Քարակոլլեան, Բաֆֆի Զերեան, Մակի խաչերեան եւ Սոնա Արրահմեան) միացան Բերիոյ Թեմի ներկայացուցիչներուն: Երկու Խորհուրդները, իրենք անմիջական պատասխանատուներ իրենց թեմերու Կիրականօրեայ Դպրոցներուն, միասնաբար քննարկեցին Կիրականօրեայ Դպրոցին կեանքի գարգացման եւ առաւել աշխուժացման կապուած միջոցները, ինչպէս նաեւ՝ միջթեմական համագումար-խորհրդակցական ժողովին կազուած կազմակերպական որոշ կէտեր:

Երեկոյեան երկու խորհուրդներուն միացաւ ՀԵԿԴՅՈՄԻ վարչութիւնը (Արչո Սարեան, Էլիզ Մահլպճեան, Արչո Պապեան, Լիզա Արապեան, Ժանին Դանիէլեան, Սարգիս Տօնիկեան, Հրալդ Կարապետեան, խաչիկ Գառնէշեան, Վիգէն Գասպեան) եւ միասնաբար նախ կազմեցին միջթեմական խորհրդակցական ժողովի օրակարգը եւ ապա քննարկեցին Կիրականօրեայ Դպրոցներու ուսուցիչներու գնահատութեան կերպերն ու ուսումնական կեանքին հետ կապուած հիմնական հարցերը: Այնուհետեւ վարիչ տնօրէն Հայր Սուրբ ժողովականներուն յայտնեց Կաթողիկոսութեան Ազգ. Ընդհանուր Ժողովի (Գումարուած 27-30 Մայիս, 1996) այն բանաձեւը, որ կապուած է ըրիտունական դաստիարակութեան ընդհանրապէս եւ Կիրականօրեայ Դպրոցներուն մասնաւորաբար:

ԹՂԹԱԿԻՅ

ՄՆՆԴԱՄԹԵՐՔՆԵՐՈՒ ՈՐԱԿԻՆ ՀՍԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայաստանի Դիտորիւններու Ազգային Ակադեմիայի (ՀԴԱԱ) նախագահութեան նիստին ընթացքին ընթացիկ տարեկան անդամներին որակի հակասութեան միջոցները:

ՀԴԱԱ ակադեմիայի Լիա Օսիպեան յայտնեց, որ աշխարհի մէջ գոյութիւն ունին աւելի քան 70 հազար տեսակի մանրէներ, որոնք պատճառ կը դառնան հիւսնդութիւններու յառաջացման, ինչպէս՝ բաղակերպ: Այսուհանդերձ Հայաստանի մէջ սննդամթերքներու որակի հակասութիւնը բացակայ է մասնաւորաբար՝ իրրի օժտուկաւոր իւր առաւելող մթերքներով: Դաշնակցութիւնը

Ապա ՀԴԱԱ փոխ նախագահ ակադեմիայի Էմիլ Դարբիլեան ներկայացուց դիտելու տեսչութեան տուեալները՝ իրեն մարդասիրական օգնութիւն Հայաստան ուղարկող դիտելու վերաբերեալ, որոնց 70 առ հարկեր չ'օգտագործուած:

Ան տեղեկացուց, որ դիտելու տրամադրում են Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութեան (ԱՀԿ) կողմէ, եւ վերջին հօրը ամիսներու ընթացքին դիտելու տեսչութիւնը արձանագրած է ոչ գործածելի դիտելու քանակի զգալի նուազում:

1996 ՏԱՐՈՒԱՆ ԱՄՐԱՆ ԱՆԱԿՆԿԱԸԸ

ԼԻԲԱՆԱՆԱՅՈՒԹԵԱՆ

ՀԱՅ ԵՐԳԻ

ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ՓԱՌԱՏՕՆ

Կազմակերպութեամբ՝ ՎԱՆԱՅ ՉԱՅՆԻ

Ժողովրդային եւ հայրենասիրական երգերով ելոյթ կ'ունենան

ԴՕԴՕ ՀԱՅԻԹԵԱՆ

ԿԱՐՕ ԿԱՊՈՒՏԱԿԵԱՆ

ՎԻԴԵՆ ՏԻՇԵԶԻՔԵՆԵԱՆ

ՄԱՆՈՒԿ ՄԻՆԱՅԵԱՆ

ՀԱՄԱԿԱՅԱՆ

ՌՈՊԵՐ ՔԻՐՏԵԱՆ

Մասնակցութեամբ՝ ՍԵԴՕ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ եւ իր նուագախումբին

• ԽԱՆԴԱԿԱՆ ՄԹՆՈՂՈՐՏ ԵՒ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ

Տեղի կ'ունենայ երեքշաբթի, 6 Օգոստոս 1996, երեկոյեան ժամը 8-ին սկսեալ, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի նրապարակին վրայ:

Հրաւիրուած է ամբողջ լիբանանահայութիւնը, իսկզբաւոր ժամեր անցընելու Պուրճ Համուտեան այս աննախընթաց փառատօնին:

ԱԶԳ. ԿԻԼԻԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍԸ

Ազգ. Կիլիկեան Վարժարանի մանկապարտէզի եւ նախակրթարանի վկայականաց յաշիման հանդէս տեղի ունեցաւ Զորեքշաբթի, 10 Յուլիս 1996ին, Յակոբ Տէր Մեքնեան թատերասրահին մէջ, հովանաւորութեամբ Առաջնորդական Տեղապահ Գեղամ վրդ. խաչերեանի, զորս կը ներկայացնէր Մեղրիկ վրդ. Բարիքեան:

Հանդիսութեան ներկայ էին շրջանի պատկան մարմիններ, Հոգարարժեւթեան անդամներ, ծնողներ եւ բարեկամներ:

Յայտագիրը սկսաւ լիբանանեան եւ հայերէն քայլերգներով, ապա մանկապարտէզի ներկայացուց իր յայտագիրը, իւրաքանչիւր դասարան իւր յարձրացուց պար, խմբերը եւ արտասանութիւններ:



Յայտագրի երկրորդ բաժնով իւր յարձրացան նախակրթարանի աշակերտները, պարով, արտասանութեամբ եւ խմբերգներով ներկայացուցին յայտագիրը: Ապա տնօրէն պրն. Զորեք Ռաստէլէյեան յատուկ արգանքներով պատուեց իւրաքանչիւր դասարանի առաջին, երկրորդ եւ երրորդ հանդիսացող աշակերտները եւ փոխանցեց իր խօսքը: Տեղին է յիշել, թէ վարժարանիս հինգերորդ կարգի աշակերտները, մասնակցեցան Ուսումնական Խորհուրդի կազմակերպած քննու-

թիւններուն եւ բոլորն ալ արձանագրեցին լաւ արդիւնքներ: Ապա իւր հրաւիրուեցաւ Մեղրիկ վրդ. Բարիքեանի եւ անոր ձեռամբ մանկապարտէզի եւ նախակրթարանի աշակերտները ստացան իրենց վկայականները: Հանդիսութիւնը վերջ գտաւ հայր սուրբի օրհնութեան խօսքով:

Վկայուեցան հետեւեալ աշակերտները:-

ՏԱՂԻԿ ԴԱՍԱՐԱՆ

Նաչիկ Նաչատուրեան, Յովիկ Կարապետեան, Գարիկ Պերպետեան, Նաչիկ Քեհէյեան, Նաչիկ Ռաստէլէյեան, Զօ Գալուստեան, Սիւրի Եուսէֆ, Սեւան Զամպապեան, Մուշեղ Քեշիշեան, Պերն Զուլֆաթեան, Սաօ Մանօ, Գեորգ Մուրատեան, Վարդան Դազեսեան, Յասմիկ Թիւթիւնճեան, Նարեկ Զիննէթեան, Արամ Սոսիֆան, Նարինէ Սոմնեան, Փաթրիկ Աւագեան, Միքէլ Նաննիանեան, Անի Մարտիկեան, Փօլ Տօնիկեան եւ Սարգիս Ներսէսեան:

Ե. ԴԱՍԱՐԱՆ

Գեորգ Արքիմեան, Սիմոն Յակոբեան, Ալին Մանուրեան, Փաթրիկա Պուլուսեան, Նաչիկ Իննէյեան, Մարինա Նաչատուրեան, Վարդուկ Կարապետեան, Լարա Ռաստէլէյեան, Գարուս Տեմիրեան, Վաչէ Միսաբեան, Ալին Տէր Գեորգեան, Յովիկ Զափարեան, Յովսէփ Շըլիտմեան, Սարին Աղապեան, Սյուրք Նուրեան, Մարի Ռոզ Սասեան, Յակոբ Զիլիկիւրեան, Ռիթա Պալթաբեան, Շողիկ Կայապեան, Առաքել Մանօ եւ Յովսէր Սարգիսեան:

ՀԱՅԱՍՏԱՆ – ՅՈՐԳԱՆԱՆ ԴԻԼԵՆԴԳԻՏԿԱԼ ԿԱՂ

Վերջերս Յորդանանի եւ Հայաստանի միջեւ կնքուած է համաձայնագիր մը՝ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման մասին:

Համաձայնագիրը ստորագրած են Յորդանանի արտաքին գործոց նախարար խալէտ Մատտան եւ Սուրիոյ մօտ Հայաստանի դեսպան Դաւիթ Յովհաննիսեան:

ՄԵՐ ԿԱՄԵՐ ԱՐՏԱՅԱՅՏԵՆԸ ՄԵՐ ՔՈՒԷՈՎ

Հ. Յ. ԴԱՇԵԱԿՅՈՒԹԻԻՆԸ ՍԱԶԲՈՒՆԶԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՂԱՔԱՆ ԶԻՋՈՒՄՆԵՐԻ ՉԻ ԳՆԱՅ

Հ. Յ. Դաշնակցութեան Հայաստանի Կապ-
մակերպութեան Գերագույն Ժողովը առիթ
տուաւ մեկնաբանական յօդուածներու, որոնց
մէջ յաճախ տեղ գտան թիւր եւ սխալ վերագ-
րումներ, վերլուծումներ, գնահատականներ։
Ստորեւ տրուած յօդուածին մէջ եւս տեղ
գտած են նման թերի վերագրումներ, սակայն
պայն կը հրատարակենք անոր կարգ մը գա-
ղափարներուն համար, եւ որովհետեւ անի-
կա այլ յօդուածներէ աւելի լուրջ մօտեցում
մը ունի։

«Ինչ վերաբերում է կասեցման իրաւաբանական
առիթներին, այդ ամէնը Հ. Յ. Դ. ի կողմից վերացուած
է։ Եւ եթէ նույնիսկ վերացուած էլ չլինէր, այդ երկու
կարգաւորում էլ Դաշնակցութիւնը գործել է, գործում
է եւ գործելու է Հայաստանում», Յուլիսի 17ին տեղի
ունեցած մամուլ ասուլիսում յայտարարեց Հ. Յ. Դ.
Հայաստանի Գերագույն Մարմինի անդամ Հրայր Կա-
րապետեանը։

Ընդհանուր առմամբ, Գերագույն Մարմինի անդամ-
ներ Ռուբէն Յակոբեանի եւ Հրայր Կարապետեանի
մամուլ ասուլիսում տիրում էր յստակութեան եւ վըն-
ճականութեան մթնոլորտ։ Եւ իւրեւ. Յակոբեանը, եւ
Կարապետեանը բազմիցս շեշտեցին, որ ինչպէս
իշխանութիւններ, այնպէս էլ ցանկացած քաղաքա-
կան ուժի հետ փոխյարաբերութիւններում Հ. Յ. Դաշ-
նակցութիւնը երբեք չի գնալ սկզբունքային գաղա-
փարաքաղաքական զիջումների, եւ որ ոչ թէ Հ. Յ. Դ.
քաղաքական գիծն է կանխորոշուելու իշխանութեան
հետ փոխյարաբերութիւններով, այլ յարաբերութիւն-
ներն են կառուցուելու՝ ելնելով Հ. Յ. Դ. գաղափարա-
քաղաքական գծից։ Դա նշանակում է, որ Հ. Յ. Դ. ի
Հայաստանի կառոյցը պարտաւորութիւն է ստանձնում
վարի սկզբունքային քաղաքականութիւնն եւ կուլ չզը-
նալ քաղաքական իրավիճակին։

Ասուլիսին մանրամասն ներկայացուեցին Գերա-
գույն ժողովի որոշումներն ու Գերագույն Մարմինի
առեւն դրուած խնդիրները։ Մասնաւորապէս ներկա-
յացուեցին Գերագույն ժողովի ընդունած յայտարա-
րութիւններն ու բանաձեւերը։

Գերագույն ժողովի՝ Յուլիսի 11ի յայտարարութիւ-
նում, որը լիովին համապատասխանում է ազգայնա-
կանութեան ոգուն եւ դաշնակցական աւանդոյթնե-
րին, շեշտ է դրուում նաեւ ծրագրային դրոյթների գործ-
նական իրականացման մեքանիզմի վրայ։ «Հայ Յե-
ղափոխական Դաշնակցութիւնը... գործուն դերակա-
տարութիւն է ունենալու ազգային շահերով եւ ծրագ-
րային նպատակներով առաջնորդուող, պետական քա-
ղաքականութեան վրայ ազդելու ունակ ընդդիմութեան
համախմբման գործընթացում... հանրապետութեան

ներքաղաքական կեանքը քաղաքական բոլոր ուժերի
միջեւ պետք է ընթանալ ցնցումներից զերծ բնականոն
յարաբերութիւնների հաստատման եւ զարգացման հա-
մապարհով»։

Գերագույն ժողովը յատուկ յայտարարութիւն է ըն-
դունել նաեւ հակադաշնակցական քաղաքական դա-
տարարութիւնների վերաբերեալ։ Ի տարբերութիւն
Պատասխանատու Մարմինի, որը վարչախմբի սանձա-
ղերծած հակադաշնակցական ջղագարութիւնը անուա-
նում էր «փոխադարձ թիւրիմացութիւններ», Գերա-
գույն ժողովը քաղաքական յստակ գնահատական է
տուել այդ գործողութիւններին. «Խախտելով ամեն-
դուրեւեմ կանխավարկածը, առանց սպասելու դատա-
քնութեան արդիւնքներին, չունենալով իրաւական
անհրաժեշտ հիմքեր Հ. Զ. գործողի իշխանութիւն-
ները կատարել են այնպիսի յայտարարութիւններ ու
տուել այնպիսի գնահատականներ, որոնք յանգեցրել
են Հ. Յ. Դ. անօրինական կասեցման եւ կանխորոշել
դատարարութիւնների ելքը։ Փաստօրէն Հ. Զ. իշխող
վարչակազմը այս գործերով քաղաքական պատու էր
տուել դատական համակարգին, ինչը հակասում է իշ-
խանութիւնների տարանջատման հիմնարկ սկզբուն-
քին... Նման նախադեպերը վտանգում են ազգային
համաձայնութիւնը եւ ժողովրդավարական, իրաւա-
կան պետութեան կայացումը։

Փաստօրէն Հ. Յ. Դ. չնմանալով կասեցման օրինա-
կանութիւնը, «դրանով իսկ ստանձնել է ցոյց տալիս»
վարչախմբին եւ իրեն իրաւունք է վերապահում չհնա-
զանդուելու վարչախմբի որոշումներին եւ պար-
տադրուող «խաղի կանոններին», ինչը կը բարձրացնի
ինչպէս Հ. Յ. Դ. ի քաղաքականութեան արդիւնաւե-
տութիւնը, այնպէս էլ՝ կուսակցութեան վարկանիշը,
քանզի Հայաստանում տիրող մթնոլորտում այսօր
հաշուի են նստում միմիայն ուժի գիրքերից հանդէս
եկողների հետ։

Անդրադառնալով Հ. Յ. Դ. ի նախագահական ընտ-
րութիւններին մասնակցելու հարցին՝ Ռ. Յակոբեանը
շեշտեց, որ Հ. Յ. Դ. ի թեկնածուով չի մասնակցի
ընտրութիւններին, քանզի Հ. Յ. Դ. ի միակ հնարաւոր
թեկնածուն՝ Վահան Յովհաննիսեանը՝ քաղաքական
դրդապատճառներով գտնուում է ապօրինի կայանքի
տակ։ Այդպիսի վերաբերմունքը Հ. Յ. Դ. ի առաջնորդի
հանդէպ վկայում է, որ կուսակցութիւնը մտադիր է
տէր կանգնել իր առաջնորդին, ինչը, ցուց, չի կարե-
լի սակ նախկին Պատասխանատու Մարմինի մասին։
Եւ բացի այդ, Վ. Յովհաննիսեանի՝ պատուիրակների
ծայերի առաւել քան 2/3ով Գերագույն Մարմինի ան-
դամ ընտրուելը պատիւ է բերում դաշնակցականնե-
րին եւ հօգր քաղաքական ու բարոյական աջակցու-
թիւն է Հ. Յ. Դ. առաջնորդին։

3. ԳԱՆՅՈՒՄՆ

ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ՔՐԷԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ (1953 – 1960 ԹԹ.)

1948 - 47 թթ. գանգուա-
ծային հայրենադարձու-
թիւնը թէ՛ իր չափերով եւ
թէ՛ հետեւեալներով խոշոր
իրադարձութիւնն էր Հա-
յաստանի համար։ Այն,
ակնյայտ դրական նշանա-
կութիւնից բացի, ունեցաւ
նաեւ տխուր հետեւանք-
ներ։

Ընկերային տնտեսա-
կան եւ քաղաքական միջա-
վայրը փոխելով՝ մեր հայ-
րենակիցները ստիպուած
էին յարմարուել իրենց հա-
մար ոչ սովորական հասա-
րակարգի իրականութեա-
նը։ Զմուռնանք, որ այդ
տարիներին հաստատուած
էր ստալինեան մենիշխա-
նութիւնը եւ վերջինից
բխող բռնապետութեանը
յատուկ մթնոլորտը։ Պա-
տերազմի յաղթանակի հա-
մընդհանուր ոգեւորու-
թեանը գալիս էին փոխա-
րինելու հերթական զանգը-
ւածային հալածանքների
տուլիւնը գտաւ 1949 թ.

Յունիսի 13ին Հայաստա-
նում իրականացուած
գանգոլծային արտաքա-
նութիւնը գտաւ 1949 թ.
Յունիսի 13ին Հայաստա-
նում իրականացուած
գանգոլծային արտաքա-
նութիւնը գտաւ 1949 թ.
Այլթալի եւ հեռուոր այլ
երկրամասեր։ Բռնութեան
այդ հուժկու ալիքն իր մէջ
առաւ նաեւ ոգեւորու-
թեամբ եւ մեծ յոյսերով
հայրենիք եկած մեր հայ-
րենակիցներից շատերին,
որոնք իրենց մաշկի վրայ
զգացին աքսորն իր բոլոր
«հայքներով»։

1953 թ. վահանութեան
«Ժողովուրդների Դահլի-
ճը» Ստալինը, որին հետե-
ւեցին յայտնի իրադարձու-
թիւնները՝ կապուած ան-
հատի պաշտամունքի քրե-
նադատման հետ։ Արդա-
րացուեցին շատ անմեղ գո-
հեր, աքսորավայրերից վե-
րադառնում էին մարդիկ,
ընտանիքներ, պատժուած
էին անօրինականութիւն-
ներ թող տուած որոշ պաշ-
տոնեաներ... Սակայն ամէն
ինչ չէ, որ հետեւութեամբ
տեղի էր տալիս արդէն ձե-
ւաւորուած քաղաքական
համակարգում։ Ճիշդ է,
առանցցուցադրութեան եւ
նախորդ տարիների համար
բնորոշ գանգուածայնու-
թեան՝ ձօնկան թուերին
դատարաններում չարու-
նակում էին դատապարտել
երկրի քաղաքացիներին
հակախորհրդային արտա-
յայտութիւններ թող տա-
լու համար։

1953 - 60 թթ. Հ. Խ. Ս. Հ.
քրեական օրէնսգրքի 67
յօդուածի ին մասով, որը
պատժել էր նախատեսում
հակախորհրդային արտա-
յայտութիւնների համար,
Հայաստանում դատա-
պարտուել են 27 մարդ։ Թէ
չօգր Խորհրդային Միու-
թեան համար ինչ վտանգ
էին ներկայացնում այդ
«յանցագործները», կր տե-
ղեկանանք ծանօթանալով
ներանցից մի քանիսի գոր-
ծերին։ Բոլոր հասարա-
կարգերում միշտ էլ կը
գտնուեն մարդիկ, որոնք
դժգոհ կը լինեն ինչ-ինչ
հարցերից եւ բարձրաձայն
կ'արտայայտուեն դրա մա-
սին, առաւել եւս, ետպա-
տերազմեան իրավիճա-
կում հնարաւոր չէր խու-
սափել նման երեւոյթների
գրեւորումները։ Դրանք,
որպէս կանոն, կրում էին
կենցաղային բնոյթ, սա-
կայն հասնելով դատական
ատեաններ՝ ստանում էին
քաղաքական գնահատա-

Ստալինեան բռնատիրութեան տարիներում գործադրուեցան ան-
մարդկային այնպիսի ոճիւրներ, որոնց նկարագրութիւնը եւ պատճառ-
ները ուսումնասիրութիւնը երեւան կը հանէ ժամանակաշրջանի
ամբողջ արհաւիրքը՝ նախկին Խորհրդային Միութեան տարածքին։
Այս բոլորէն ամառն չմնաց նաեւ Հայաստանը, եւ հոն ապրող հայը
եւս ապրեցաւ դաժան տարիներ։ Աքսոր, խորհրդաւոր մահեր, լրտեսու-
թիւն, հոգեբանական անտանելի ճնշումներ եւ տակաւին բազմապիսի
ոճիւրներ որոնացող մեծ մարդասպանի քաղաքականութեան մաս կը
կազմէր նաեւ ամէնէն չնչիւ արտայայտութեան ետին տեսնել դաւադ-
րութիւն եւ ենթական պատժել։

Ահա այդ քաղաքականութեան վերաբերեալ քանի մը փաստեր, որոնց
«տէրերն» են Հայաստան ներգաղթած հայեր՝ Յունաստանէն, Եգիպ-
տուէն, Ֆրանսայէն։

Կաննք։ Բնական էր, որ
նման դժգոհութիւնները
կարող էին լինել եւ հայրե-
նադարձների մէջ, եւ պա-
տահական չէ, որ Հայաս-
տանում վերոյիշատակած
յօդուածով դատապարտ-
ւածները ծրնրանցից էին։

Ստորեւ ներկայացնենք
հատուածներ վերջիններից
մի քանիսի գործերից,
որոնք այդ տարիներին տի-
րող ընդհանուր իրավիճա-
կի եւ 1948 - 47 թթ. մեծ
ոգեւորութեամբ հայրենիք
եկած մարդկանց ճակա-
տագրերի իւրատեսակ
վկայութիւններն են։ 1953
թ. Մարտի 3ին Հ. Խ. Ս. Հ.
Գերագույն դատարանը 10
տարուայ ազատազրկման
դատաւճիռ կայացրեց Երե-
ւան քաղաքի բնակիչ, 56 մ-
եայ կրթութեամբ, ստոր
հայրենիք եկած մեր հայ-
րենակիցներից շատերին,
որոնք իրենց մաշկի վրայ
զգացին աքսորն իր բոլոր
«հայքներով»։

1953 թ. վահանութեան
«Ժողովուրդների Դահլի-
ճը» Ստալինը, որին հետե-
ւեցին յայտնի իրադարձու-
թիւնները՝ կապուած ան-
հատի պաշտամունքի քրե-
նադատման հետ։ Արդա-
րացուեցին շատ անմեղ գո-
հեր, աքսորավայրերից վե-
րադառնում էին մարդիկ,
ընտանիքներ, պատժուած
էին անօրինականութիւն-
ներ թող տուած որոշ պաշ-
տոնեաներ... Սակայն ամէն
ինչ չէ, որ հետեւութեամբ
տեղի էր տալիս արդէն ձե-
ւաւորուած քաղաքական
համակարգում։ Ճիշդ է,
առանցցուցադրութեան եւ
նախորդ տարիների համար
բնորոշ գանգուածայնու-
թեան՝ ձօնկան թուերին
դատարաններում չարու-
նակում էին դատապարտել
երկրի քաղաքացիներին
հակախորհրդային արտա-
յայտութիւններ թող տա-
լու համար։

1953 - 60 թթ. Հ. Խ. Ս. Հ.
քրեական օրէնսգրքի 67
յօդուածի ին մասով, որը
պատժել էր նախատեսում
հակախորհրդային արտա-
յայտութիւնների համար,
Հայաստանում դատա-
պարտուել են 27 մարդ։ Թէ
չօգր Խորհրդային Միու-
թեան համար ինչ վտանգ
էին ներկայացնում այդ
«յանցագործները», կր տե-
ղեկանանք ծանօթանալով
ներանցից մի քանիսի գոր-
ծերին։ Բոլոր հասարա-
կարգերում միշտ էլ կը
գտնուեն մարդիկ, որոնք
դժգոհ կը լինեն ինչ-ինչ
հարցերից եւ բարձրաձայն
կ'արտայայտուեն դրա մա-
սին, առաւել եւս, ետպա-
տերազմեան իրավիճա-
կում հնարաւոր չէր խու-
սափել նման երեւոյթների
գրեւորումները։ Դրանք,
որպէս կանոն, կրում էին
կենցաղային բնոյթ, սա-
կայն հասնելով դատական
ատեաններ՝ ստանում էին
քաղաքական գնահատա-

սինքն կատարել է յան-
ցանք, որը նախատեսուած
է քր. օր. 61 յօդ. (այստեղ
միջամտենք՝ նշելով, որ
գործում այս կէտի մեղադ-
րանքը հաստատող որեւէ
